լոմհեան ծրիակեր էին), մեղր պատրաստողներ, դիակիրներ (սպանված կամ սատկած մեղուները փեթակից դուրս տանողներ), պահակները մածուցիկ հյութով ծեփողներ և այլն։

Վայրի դաղձի ջուրը հականեխիչ հատկություն ուներ։ Դաղձը առանց որևէ խառնուրդի լավ խաշում էին պտուկի մեջ, խուփը խմորով ծեփում, որ շոգին դուրս չգար. ջրով և իր շոգիով եռացած դաղձը մի օր պահում խաշված ջրի մեջ, ապա քամում և փեթակների վրա սրսկում, երբեմն էլ ծրղի մուտքի դռան առաջ փոքր ամանով դաղձաջուր դնում մեղուների համար, որոնց մի մասը այդ ջրից խմում էին, բայց ոչ բոլորը։

Լեռնաշխարհի փեթակներից ստացված մեղրի միջին քանակը ամեն մի փեթակի համար 5 լիտր (լիր) էին հաշվում, իսկ առավելագույն չափը՝ 8 լիտր, նկատի ունենալով, որ մի լիտրը համասար էր թուրքական վեց հոխային, մեղրի արտադրությունը տատանվում էր 30-ից 50 հոխայի միջև (ամեն մի փեթակի համար)։

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Լեռնաշխարհում որսորդությունը մնում էր իր նախնական վիճակում, հատուկ միություններ ու կազմակերպություններ չկային, սակայն պահված էին որսի անգիր կանոնները, որոնք ավագ և փորձառու որսորդների կողմից ավանդաբար հաղորդվում էին նորահասներին։ Դրանց պահպանմանը հսկում էին տարիների փորձառություն ունեցող ծեր որսորդները։ Ամեն մի նոր որսորդ պարտավոր էր երդվել ավագների առջև որսի կանոնները չխախտելու համար։ Ավանդական կանոնների հիմնական կետերը հետևյալներն էին՝

1. Արգելվում էր զենք արձակել (նույնիսկ վախեցնելու համար) առհասարակ բոլոր կենդանիների և թռչունների ձագեր ունեցող մայրերի վրա։

2. Թռչունների որսը արգելված էր հին տոմարով օգոստոսի մեկից մինչև փետրվարի վերջը։ Մարտի մեկը, որպես գարնանամուտի տոն, դիմավորել ընդհանուր խանդավառությամբ և զենքերը յուղելուց հետո ձեռք չտանել մինչև արտոնված նոր շրջանը։

3. Չսպանել արագիլին, կռունկին, վայրի աղավնուն, կարապին, անգղին, սոխակին, սարյակին և ծիծեռնակին։

4. Արգելվում էր կոտորակներով թռչուն խփելը. դա նկատվում էր նամարդություն և թռչունների կոտորած։

5. Չսպանել էգ եղնիկներին (լինեն մայրության շրջանում կամ ոչ), վայրի կատուներին, նապաստակներին։

Այս կանոնները չհարգող որսորդի զենքը գրավվում էր, և տիրոջը մի տարով արգելվում որսի գնալ, անկախ այն ծայրահեղ պատժից, որ ինքը՝ որսի փիրը, տալիս էր անհնազանդներին.

Լեռնաշխարհում որսը առատ էր, որսորդությունը անսահմանափակ, վերի կանոնների սահմաններում։

Դերսիմում եղած վայրի կենդանիներն էին՝ գազաններ և կրծողներ՝ արջ (մոխրագույն), գայլ, [illegible], սև արջ, լուսան, աղվես, սկյուռ, հարսնուկ, վայրի կատու, նապաստակ, փորսուղ (փորսող), իշխար, վարազ, կզաքիս (որի մորթը շատ թանկ էր)։

Սմբակավոր վայրի կենդանիներ՝ ցուլ ([illegible]), բծավոր եղջերու, եղնիկ, այծյամ (քարայծ), ոչխար, խոզ։

Վայրի թռչուններ՝ թոյ, սագ, բադ (տասը տեսակից ավելի), անգղ, արծիվ, ուրուր, բազե, փասյան (ֆազան), վայրի հավ, վայրի [illegible], կարապ, անգուտ, կարավ, ջրո-կարավ, վայրի աղավնի, կոցար, արորիկ, հավլորիկ, սարյակ, սոխակ, ծիտ (ընտանին, հինգ տեսակից ավելի, դանազան գույնի), էվերիկ, տատրակ, լոր, կռունկ, արագիլ, կռա-կռա, ոդոռով (դանազան գույնի ու մեծության), ճաճեկ, ծիծեռնակ և այլ երգող, սուլող դանազան թռչուններ։

Հակառակ որսորդների կատարած սպանություններին, որսի քանակը փոխանակ նվազելու ավելանում էր։ Քարայծերը, վայրի խոյերը, ոչխարները և եղնիկները սարից-սար, անտառից-անտառ էին շրջում մեծ խմբերով, միայն հովազների թիվն էր սահմանափակ, համեմատած գայլերի և արջերի հետ։ Գայլերի թիվը անհամեմատ ավելի մեծ էր, քան արջերինը։ Վարազների, նապաստակների, խոճկորների առատությունը, երկրի բնական դիրքը, կլիմայական պայմանները, վայրի պտուղներով հարուստ կույս անտառների առավելությունը նպաստում էին վայրի կենդանիների բազմացմանը։

Հակառակ մի շարք վայրի գազանների մարդոց հասցրած չարիքներին, դերսիմցիները լեռնաշխարհի զարդն էին նկատում դրանք. դերսիմցին չէր կարող պատկերացնել առանց արջի անտառ, առանց քարայծի ապառաժ, առանց գայլի սար։

Արջի, գայլի, հովազի, քարայծի, ոչխարի որսը առհասարակ կատարվում էր համագործակցական

ձևով. սպանված գազանը կամ կենդանին հավասարապես բաժանվում էին որսի մասնակիցների միջև։

Կային արհեստով որսորդներ, որոնց գլխավոր զբաղումը և ապրելու միջոցը որսն էր։ Գազանների որսը որսորդի պատվի խնդիրն էր, արջի որսորդը վայրի հավ կամ կաքավ չէր խփում։ Կային հատուկ խմբեր, նույն ընտանիքի անդամներից կազմված կամ ընկերների, որոնք զբաղվում էին միայն արջի որսորդությամբ, կային գայլերի որսորդներ և այլն։

Քարայծի, ոչխարի որսը սիրողների գործ էր, իսկ թռչնազգիներով քչերն էին զբաղվում։ Նախ, որ թռչունի որսի արդյունքը, համեմատած քարայծի կամ խոյի որսին, անհամեմատ ավելի փոքր էր, երկրորդ, որ առանց կոտորակի մի դնդակով թռչուն խփելը թե դժվար և թե ծախսի գործ էր։ Թռչունների որոր առավելապես կատարում էին թակարդների և ծուղակների միջոցով, որը թե լժան և թե առատ որս էր տալիս, մանավանդ որ ողջ էին բռնում և պահում։

Մեծ որսի դնացողը պարտավոր էր որսի դնալուց առաջ առնել տան մեծի օրհնությունը, չպառկել կնոջ անկողնում, չհարաբերվել կանանց հետ, սիրալիր վերաբերմունք ցույց տալ ճամփի ընթացքին իրեն հանդիպողին։

Եթե պատահեր, որ տնից դուրս գալու ժամանակ կատու անցներ առջևից և կամ որսի վայրը դեռ չհասած նապաստակ կամ խոճկոր խաչաձևվեր ճանապարհը կամ բուն թռչեր իր առջևի թարրստոցից, որսորդը ետ էր դառնում և հետաձգում որսի դնալը։

Ընդունված սովորություն էր, որ սպանված (ոչ թե թակարդով) որսից բաժին հանեն դրացիներին և ազգականներին, բացի որսի մորթուց, մնացյալ միսը չէին վաճառում, այլ կամ բաժանում էին և կամ բարեկամներ, ծանոթներ հրավիրում խորոված։

Դերսիմի բարձրադիր սարերում լճակներ շատ կային, կապտավուն ու դուլալ լճակների դարդը նկատվող կարապներին և անդուտներին չէին ուղտնում, նախ որ արգելված էր, հետևաբար և մեղք էր համարվում, երկրորդ՝ դեղեցիկի պաշտամունքը շատ զորավոր էր, իսկ անդուտը պատկանում էր թռչունների այն ընտանիքին, որ մեկի սպանության դեպքում երկրորդը ընկեր չէր ճարում։ Անդուտները շրջում էին դույդով՝ արու և էգ. երբեր խմբեր չէին կազմում, եթե պատահեր, որ դույդերից մեկին խփեին, ողջ մնացողն այնքան ապիոդորմ ճիչեր էր արձակում և ինքդինքը չարչարում, մաշում, որ նույն օրն իսկ կսկծից մահանում էր։

Լճերում և լճակներում սագեր, բադեր շատ էին լինում, բայց քչերն էին ուշադրություն դարձնում այդ թևավորների վրա։ Վայրի հավը, կաքավը, փասյանը դտնված տեղը, բադն ու սագը մոռացության էին տրվում, այդ թռչունների որսով հետաքրքրվում էին Եփրատ և Արածանի դետերի երկու ափերում բնակվող որսորդները։

Թռչունների որսի ամենահետաքրքիրը թոյն էր։ Թոյը թևև դաշտային, ի մասնավորի մարդատենային թռչուն էր, բայց շատ էր սիրում ծաղկազարդ լեռնային հարթություններ, ուր առատորակ աղբյուրներ կային։ Թոյը կոունկից ավելի մեծ, մոխրագունավ-սոլիտակախառն, կորնկազգիների ընտանիքին պատկանող և շատ համեղ միս ունեցող թռչուն էր, կշռում էր 15—20, երբեմն մինչև 25 կգ։ Թոյերը շրջում էին խմբերով և թռչում երամներով։ Դրա որսը վայրի արագաղի որսից հետո ամենադժվարն էր, որովհետև թոյերն տրածելիս հսկող պահակներ էին նշանակում, որոնք թառած շրջապատի ամենաբարձր ժայռին, ուշադրությամբ հսկում էին իրենց տրածող ընկերներին։ Թոյը բարձրաթռիչ էր, բայց մարմնի ծանրության հետևանքով մինչև օդ բարձրանալը դանդաղում էր, դեռևս կտրվելիս ուրիշ թռչունների արագաշարժություններ չուներ, որոշ տարածության վրա թռչում էր դրեթե դետնին կպած, մինչև կարողանար բիչ-բիչ վեր բարձրանալ և թռիչքը արագացնել։

Թոյերը սրատես և հոտառու էին, որսորդի ամեն խորամանկություններ՝ մոտենալու թոյին, մնում էր ապարդյուն, ուստի նրան որսում էին սրընթաց ձիու օգնությամբ կամ դոմեշի սայլով։ Որսորդը հեծնում էր սրընթաց նժույգ և արշավում թոյերի խմբի ուղղությամբ, մինչև պահակների իմաց տալը, մինչև թոյերի օդ բարձրանալը ձիավոր որսորդը մերկ սուրբ ձեռին հասնում և հալածում էր նրանց, նման պարագաներում երեքից մինչև ութ թոյ խփող որսորդներ կային։

Իսկ դոմեշի սայլով թոյի որսը ավելի հեշտ և ապահով էր։ Թոյը, որպես ջուր և ջրոտ մարդեր սիրող թռչուն, դրեթե վարժված էր դոմեշների և մատակների ընկերակցությանը և չէր վախենում նրանցից։ Որսորդը թաքնվում էր դոմեշներ լրծված սայլի վրա և այն դեպի թոյերի խումբը ուղղելով, հրացանը պատրաստ պահում, մինչև որ սայլը մոտենար դնդակի հասողության, ի կրակում էր։ Սայլով որսը երբեք ավելի չէր լինում.

մինչև երկուսը կամ երեքը սպանելը. մյուսները հեռանում էին։

Նվազ հետաքրքրական էր նաև վայրի արյունների որսը, որոնց քաշը մինչև մի լիտր էր լինում։ Վայրի արագաղի որսը անկարելի սալու չափ դժվար էր։ Դա թռչի նման դանդաղաշարժ չէր, մանավանդ, որ թառում էր բարձր ծառերի կամ ժայռերի գագաթներին։ Սրատես աչք և սուր լսողություն ուներ, թույլ չէր տալիս, որ որսորդը դնդակի հեռավորությամբ մոտենա իրեն։

Վայրի արագաղի որսն էլ պատմելու խնդիր էր, մանավանդ երիտասարդ որսորդների համար, երբ ամուսնանալու էին պատրաստվում։

— Ընանկ թավուռ անեկ, դիտես կը բի վիրս խորոդ պաներ է։ Եվ կամ՝

— Աղջի Մայրս, բսին կը բի Պաղատից Ակոի տղեն սխտոր թու դերկեր է, դորդա։

— Էնչկա գլխին, երբ թոյ դերկոդիս աշիր, սխտոր մենսում կարավը սխտոր թուի տեղ թշին կը բի, Սահակից Զարմանին անկրնին հասնի օր Բերկրցուն խոսբը չկոտա, հա բսա։

Այսպես հաճախ որսը մրցության, փառքի և պատվի հարց էր դառնում, երբ մանավանդ որսորդը ամուրի էր և թոյ կամ վայրի արյուր էր խփել։

Վայրի արյունը հեշտությամբ կարելի էր խփել միայն մայիսի 1-ից մինչև 20-ը, երբ նա սիրահարված էր և ոչինչ չէր տեսնում, բացի իր սիրուհի վայրի հավերից, որոնք սիրազեղ ջկլկոցներով պատասխանում էին իր հրավեր կանչին։ Վայրի արյունն այդ բան օրվա ընթացքին այնքան տարված էր լինում իր հավերով, որ աչքերը փակ, ականջներ գցում էր սար ու ձոր, կանչում հա կանչում, այնքան սրատեսությամբ, որ չէր տեսնում, չէր լսում, նույնիսկ չէր զգում որսորդի մոտենալը, հրացանն ուղղելը և կրակելը։ Բոլոր թռչունների մեջ կարելի է ասել, թե վայրի արյունը իր սիրո անմիջական զոհն էր դառնում։

Վայրի հավերի որսը ավելի հեշտ էր։ Նրանք անտառում կամ ապառաժներում արածում էին խմբովին, հաճախ ձայն էին տալիս իրար և մատնում իրենց գտնված տեղը։ Վայրի հավի կշիռը հասնում էր չորսից հինգ կգ, միջը համեղ էր։ Ընտանի հավի թխսի տակ դրված վայրի հավի ձվերից դուրս եկած հաները թռչում էին։ Իրենց վայրի նախնիները երեք սերնդից հետո էին միայն կորցնում, վայրի հավի ձվերից ստացված հոտը ավելի խոշորակազմ և դիմացկուն էր լինում։ Լեռնային շրջաններում հավերի ցեղը ապնվացնելու համար հաճախ գտնվում էին վայրի հավերի ձվերից։

Կարավը հրացանով խփելուց ավելի, որսում էին աուգախներով և կամ ձորի մի կողմից մյուսը թռցնելով ու հոդնեցնելով։ Հոգնած կարավը դլուխը խրում էր ձյան մեջ և պոչը դուրս թողնում։ Հեշտությամբ հավաքում և ողջ-ողջ տանյակներով տուն էին բերում։ Ձմռան ընթացքում անդեն կարավի որսը շարունակվում էր, ամեն մի երիտասարդ իր որսի վայրն ուներ, ուր աուգախներ էր լարում և օրը երկու անգամ գնում ստուգելու։ Տուգախները լարվում էին ակնաղբյուրների մոտերքում, ուր կարավները իջնում էին ջուր խմելու կամ ավազ փնտրելու։ Ամեն մի չափահաս տղա լարում էր 10-ից մինչև 20 տուգախ։

Ամենահեշտը փասյանի և էվեիկի որսն էր՝ երկուսն էլ անմեղ և միամիտ թռչուններ։ Այս թռչունների որսի շրջանը կարճ էր տևում՝ օգոստոսի 1-ից սեպտեմբերի 10-ը, որից հետո չվում էին։ Փասյանները բարձրից չէին թռչում և առհասարակ արևածագին իջնում են ֆիկի կամ զարու խոզանները արածելու։ Էվեիկներին և փասյաններին կարելի էր հեշտությամբ որսալ առավոտյան մոտ 7—10-ը, իսկ երեկոյան՝ ժամը 16—19-ը։ Փասյանի կշիռը 2—2,5 կգ, իսկ էվեիկը, որ տատրակի նմանություն ուներ, հազիվ կես կգ էր լինում։

Ջերմուկից դեպի արևելք, Աղձերենից բիչ վերև, մինչև Զորբերնա խանի ստորոտը, Երդնկարին խառնող Երկայնքին, մինչև Եփրատ հասնող տարածություններ հաճախային էր, տեղ-տեղ՝ անուտներ և հաղարներ։ Այս շրջանի եղեղնուտները անանցանելի և շատ վտանգավոր էին՝ մի տեսակ լայնացած ջրամբար և սակայն կասկածելի ու խորհրդավոր և մարդ չէր կարող հասկանալ, թե որտեղ ապառով էր, որտեղ՝ վտանգավոր և կամ հաճի որ մասն էր հնուտ, որ մասը՝ հաղարի հնուտ ասվում էր այն տեղին, որի մակերևույթը թեև կանաչ բուսներով և կամ եղեղներով էր ծածկված, բայց ծանրության չէր դիմանում, մարդ թե անասուն, եթե պատահմամբ ընկնեին այդտեղ, սուզվում էին։ Հաղարը հաճի այն տեղն էր, որ տեսական տեղափոխման էր ենթակա՝ նայած ջրի հնչմանը և հոսանքի ուղղությանը, ուստի շատ վտանգավոր էր, անասունները, մանավանդ գոմեշները ու մատակները, ընդդիմանում էին նման տեղերից։

Եվ սակայն ընդարձակածավալ այս հաճիները ապաստարան, կեր և թարստոց էին հայթայթում միլիոնավոր թռչունների, այստեղ ջրային

թռչունների՝ վայրի սագերի և բադերի, անդուտների, ջրհավերի, արորիկների, նույնիսկ ջրշունների թագավորությունն էր։ Ճահճային այս շրջանը միշտ դալարագեղ և հրապուրիչ էր, մանավանդ որսորդների համար, սակայն վտանգավոր, ուստի որսորդները դիմում էին խորամանկության՝ իրարից բավական հեռու թաքնվում էին մացառների տակ, իսկ մի երկուսը հակառակ ուղղությամբ կրակում էին դեպի եղեգնուտի կենտրոնը՝ աջ ու ձախ։ Խրտնող թռչունները դուրս էին գալիս ճահճից և թևածում զանազան ուղղությամբ։ Թաքնըված որսորդները կրակում էին ըստ բախտի և առանց ընտրության՝ թե սպանվածը բադ է, թե սագ, ջրհավ, թե ձկնկուլ։

Ամեն պարագայում որսի գլխավոր առանցքը կազմում էին վայրի գազանները, առավելապես արջն ու գայլը, առաջինի մորթը ծախում էին, միսը ուտում, ճարպից էլ դեղեր պատրաստում, իսկ գայլը որպես ոչխարի թշնամի, ենթակա էր ընդհանուր հալածանքի։ Գայլին, բացի մայրության շրջանից, սպանում էին, ուր պատահեր։ Ասացվածք կար, թե՝ «Օձն օր օձ է, օր ձագատեր մար է, ձեռք մի տա»։

Արջ սպանելն այնքան էլ հեշտ չէր, վիրավոր արջը կատաղում և մեծ ավերներ էր գործում։ Նա հարձակվում էր պատահական մարդկանց, անասունների վրա և՛ բզկտում։ Արջին պետք էր խփել գլխից, ճարպակալած մարմինը դիմանում էր մինչև հիսուն գնդակի վերքին, արջի խոցելի տեղը առավելապես գլուխն էր և նա բնազդաբար գլուխը միշտ շարժում էր։

Արջի որսը կատարում էին շրջապատումներով և շուրջկալներով, սրտոտ և անվեհեր որսորդները, ի պահանջել հարկին ստիպված էին լինում գոտեմարտել և դանակով սպանել դրան, հարվածելով թոքերին։

Մինչև երինջի մեծության գորշ արջեր շատ կային, որոնց որսը կատարվում էր մասնագետ, փորձառու և հանդուգն որսորդների կողմից։ Աղվեսը, կզաքիսը և սկյուռը որսում էին մորթիների համար, մանավանդ կզաքիսը, որ աղվեսից փոքր և սկյուռից մեծ էր, մորթին շատ հարգի էր, հինգ անգամ ավելի էր գնահատվում, քան աղվեսինը։

Թաթան գյուղում որսորդությունը կատարվում էր այլ կերպ՝ անվեն, չէին օգտագործվում նաև կապուլներ[1] կամ տուղախներ[2]։

Ինքնապաշտպանության համապատասխան թաքստոցներ և անսպառ կեր հայթայթող այս շրջանում ապաստան էին գտել վայրի գազանների ու որսի կենդանիների շատ տեսակներ, որոնք ապրում էին առանձին շրջաններում և հետապնդվում մեկ-մեկ կամ հավաքաբար հալածվում Թաթանի բնակիչներից։

Թաթանցիներին ծանոթ էին կենդանիների թաքստոցները, նրանք հրացան չէին արձակում, գազաններին չխրտնեցնելու համար, այլ որսում էին գազանների փոքր ձագերին, իսկ եթե մայր արջը վրա էր հասնում և պատրաստվում հարձակվելու իր քոթոթների հափշտակիչների վրա, այն ժամանակ թաքստոցից դուրս էր գալիս վիթխարի գազանազուսպ Պիրխոն և բղավում. «Ձըռռ, ձըռռ, խալո, ձըռռ» և թքելով արջի երեսին, երկու ձեռքերը խփելով մերթ իրար և մերթ ծնկներին, պատրաստվում մենամարտի։

Արջը լսելով «ձըռռի» հրավերը և կատաղած իր վրա նետված թքից, ինքն էլ թքում էր հակառակորդի երեսին և կանգնելով ետևի երկու թաթերին, հարձակվում էր հակառակորդի վրա և գըրկում նրան։ Դրան սպասող Պիրխոն մի թևով գըրկելով արջի պարանոցը, մյուսով ձեռքի արագ և վարժ շարժումով դանակը խրում էր արջի սիրտը և տապալում գետին։ Իսկ թաքստոցի ներսում գտնվող օգնականը այդ միջոցին վաղուց ավարտած էր լինում իր գործը քոթոթների հետ, նրանց տեղավորելով մազից հյուսած խուրջինի մեջ։

Լաճե Ակե Միրագի Պիրխոն հանրածանոթ էր այդ շրջանի քրդերի մեջ, նա խուսափում էր մայր արջին սպանելուց և առհասարակ հանդիպելուց, ծայրահեղ պարագայում էր, որ ստիպված էր լինում դիմել վերը նշված միջոցին, երբ նկատում էր, որ քոթոթներ որսացող իր ընկերոջ կյանքը վտանգի տակ է, իսկ գազազած մոր ձեռքից այլ կերպ ազատվելն անկարելի։

---

[1] Կապուլ՝ վայրի կենդանիներ որսալու երկաթե մեծ թակարդ։

[2] Տուղախ՝ թռչուններ որսալու թակարդ, որը պատրաստում էին տեղում։ Հողը փորում էին 20 սմ խորությամբ, քառակուսի, նույնքան և քիչ ավելի լայն ու երկայն չորս պատի չորս կողմերում ամրացնում էին համապատասխան մեծությամբ չորս սալքար, վրան ծածկում քառակուսի թակարդի մեծությամբ մի սալքարով, ապա վերևից բարձրացնում վրայի սալքարի մի կողմը և դնում ուղղահայաց փայտե ձողիկի վրա, որի վրայի սալքարի մեկ կողմը վեր էր պահում այն չափով, որ որսացվելիք թռչունը հանգիստ կարողանար ներս մտնել ձողիկի աջ ու ձախ կողմից։ Ձողիկի այն մասը, որ գտնվում էր տուղախի մեջ, դրված էր թռչունի կրծքից հանվող հավքաղի ձևով երկճյուղ մի փայտի միացման կետի վրա։ Ապա կորեկի կամ դարսւ հատիկներ էին ցանում հատակին և մանր հարդի փշրանքներ՝ եզրերին, երբ թռչունը ներս էր ցատկում հատիկները հավաքելու, հավքաղը շարժվում, ձողիկը տապալվում և վրայի սալը վայր էր ընկնում փոսիկի վրա։

Գազանորսները հագնում էին այծի մազից և ըրդից խառն հյուսված, ավելի ճիշտ՝ թաղված և ճմված թաղիքից հաստ հագուստներ, որոնք այնքան խիտ և թանձր էին, որ ամենասուր ժանիքը կամ ճիրանն անգամ չէր կարող ներս թափանցել։ Թաղիքե ապաշի թիկունքը, կուրծքը և թևերը մինչև արմունկներն ամրացված էին երկաթե վանդակներ և միացված իրար, որպեսզի գազանը որսորդին գրկելու և թաթերով սեղմելու պարագային կողոսկրները կամ կրծքի վանդակների ոսկորները չվնասվեին, նույնը և թևերի արմունկներից վեր մինչև ուսը։ Ապան հասնում էր մինչև գոտկատեղը, վարի մասը՝ մինչև ոտքերը. սեղմ շալվար էր, նույնպես թաղիքից. ապաշի վրայից կրում էին պողպատե զրահ, որի վրա ամրացված էին պողպատե սրածայր չորս խրիչ, որոնք ագուցված էին, առաջինը՝ կրծքին, երկրորդը՝ նույն ուղղությամբ թիկունքին, իսկ երկուսը աջ ու ձախ ուսերին, առաջին երկուսը՝ հորիզոնական, իսկ ուսերինը՝ ուղղահայաց։ Այս զրահը կրում էին գոտեմարտելիս, կրծքով, թիկունքով կամ ուսերով գազանին հարվածելու համար։ Հագնում էին զրահապատ որսորդական ապան և սակայն գոտեմարտի չէին բռնվում գայլերի հետ, այլ սպասում էին, որ գայլը հարձակվի, այն ատեն (գայլերը հարձակվում էին բերանաբաց, նրանք երբեք չեն փակում իրենց բերանները, ժանիքները իրար չանցնելու համար) ապայով պաշտպանված ձախ թևը, որի հինգ մատները առնված են լինում թաղիքե թաթպանի մեջ, խրում են գայլի կոկորդը և նրան դատապարտում անշարժության, մինչև որ աջ ձեռքի դաշույնը կատարեր իր գործը։

Ինչպես մայր արջին, նույնպես և մայր գայլին սպանելուց խուսափում էին առհասարակ. թաքստոցներից հսկում էին, որ գազանները դուրս գան որջերից ուտելիք ճարելու, այն ատեն միայն սպասողներից մեկը կամ երկուսը մտնում էին որջը և հափշտակում ձագերին, մինչև այդ եթե չէր վերադարձել մայր գազանը, ապա հեռանում էին սուս ու փուս։ Նման դեպքերում գազազած մայրը վրեժխնդիր էր լինում ոչ թե մարդկանցից, այլ թշնամի նկատված գազաններից (գայլ, հովազ, լուսան)։

Պատահել են դեպքեր, երբ ձագերը գողանալուց հետո տանից վերադառնալիս ողջ-ողջ որսացել են նաև մայր գազաններին։

Նման որսի համար որսորդը բացի հանդգնությունից, պետք է օժտված լիներ և ճարպկությամբ։

Ձագերը գողանալով տեղավորում էին փոքր հակատիկներ (զամբյուղ) ուսացող խուրջինի մեջ, որի բերանը կապելուց հետո տեղավորում էին ավելի մեծ ու լայն հաստատուն թաղիքե խարարների մեջ և կապում հաստակին։ Խարարի բերանի լայն կողմը հարմարեցված էր լինում որջի մուտքի դռան մեծությանը։ Որսորդները թաքնվում են որջի մեջ, խարարի բաց բերանը աննկատելի կերպով ամրացված լինելով որջի մուտքի դռան եզրերին, իրենք ներսում մնում էին աննկատելի. իսկ առաձգական պարաններով հարմարեցված խարարի բերանը, թոթոթների կապված տեղը կամ կողքի տարածությունը բռնելու, գցելու, բարձրացնելու և կամ սեղմելու համար էր։

Ձագերի օգնության կանչը և աղիողորմ ճիչն ու վայնասունը եթե հասնում էր մոր ականջին, նա գազազած սլանում էր դեպի որջը և որջի դռանը կամ մուտքերում թշնամու չնկատելով, սրընթաց խոյանում էր բույնը և հասնում կաշկանդված ձագերին։ Մինչ այդ իրարից դուրս թաքնված մարդիկ արդեն պոկում, սեղմում ու կաշկանդում էին մորն իր ձագերի հետ, ապա կապում, կապկպում երկար ու հաստ պարաններով. որսը փոխադրում նախապես պատրաստված և բնական ամեն հարմարություններով օժտված մի այլ քարայր, ուր տեղավորում են որսացված գազանն իր ձագերով, ապա փակում կապերը. այս անգամ խարարի բերանը բացվում էր ոչ թե մուտքի կողմը, այլ այրի խորքի մեջ։

Արջի հետ գոտեմարտելիս կիրառում էին և այլ միջոցներ ու հնարներ։ Այսպես, երբ արջը ետևի թաթերին կանգնած շորորալով առաջ էր գնում դեպի իրեն գոտեմարտի հրավիրող հակառակորդը, որսորդը մականը ձեռին ետ-ետ էր գնում, իբր թե վախեցած խուսափում թշնամուց, մինչ այդ հակառակ ուղղությամբ թաքնված մի այլ որսորդ արջի թիկունքից հասնում և նախապես պատրաստված թաղիքե խարարը անցնում էր արջի գլուխը ու վար քաշում ու պրկում պարանները։ Այդ դեպքում վրա էր նետվում և փախուստ կեղծող որսորդը, տապալում պարկակալված հակառակորդին և պարաններով կաշկանդում նրան։

Այս և սրան նման այլ միջոցներ էին կիրառվում և այլ գազանների նկատմամբ, նայած որսացվելիք գազանի բնույթին և հարձակվելու հատկություններին ու ձևերին։

Ինչո՞ւ չէին սպանում և ինչո՞ւ էին դիմում նման հնարամտությունների՝ անպայման գազանը ողջ բռնելու համար։ Ողջը մեռածից ավելի էր գնահատվում և դա մեկից ավելի պատճառներով՝ փորձարկումների համար, ընտելացնելու և վա-

ճառնելու համար, սերնդագործության և բուծանելու համար։

Արջ որսալու նպատակը, մորթի վաճառքից ավելի, այլ նպատակներով այն օգտագործելն էր։ Այդ էր պատճառը, որ նախապատվություն էին տալիս մայրն իր քոթոթներով ողջ-ողջ որսալուն։ Մայր արջն իր քոթոթներով ապրում էր իր նոր բնակարանում ավելի ձեռնտու պայմաններով՝ կերակրում էին նրան իր նախասիրած պտուղներով, մսով և զանազան արմատներով ու բույսերով։

Որսորդները տարիների ընթացքում մոտից հետևել, քննել և ուսումնասիրել էին կենդանական աշխարհի ապրելակերպը, զարգացման և ծննդաբերության շրջանները և դրանց հետ կապված բնազդական ապրումները, պահանջները, կրքերը և այլն, այնպես որ գազանը գրեթե ոչնչով զրկված չէր վայրենական աշխարհի ապրելակերպից և հեշտությամբ վարժվում ու ընտելանում էր իր նոր պայմաններին, ուր սնուցանում և խնամում էր իր քոթոթներին և հասցնում չափահասության, ապա և ծննդաբերում նոր բնակարանում։

Պատահել են դեպքեր, որ արջը սնուցել է իր քոթոթների հետ նաև աչքերը դեռ չբացված շան ձագերին, ահա այդ կարգի շան ձագերի և չափահաս արջի ձագերի միջև տեղի էր ունենում զուգավորում, շան և արջի ամուսնություն։ Այդ զուգավորումից ծնված լակոտները հովիվների փառքը կազմող ոչխարի շներն էին։ Դիտված էր, որ արու արջից և քած շնից ծնվող ձագերի և արու շնից և էգ արջից ծնվածների մեջ մեծ տարբերություններ կային։ Արու արջից ծնված քոթոթը ավելի փոքր էր, քան արու շան և էգ արջից ծընվածը, երկրորդ տեսակն ավելի մեծ և հանդուգն էր, քան առաջինը և ավելի մեծ, քան արջը։

Կային հատուկ մարդիկ, որ դալիս էին Դերսիմի շրջանները՝ Բերդակ, Բերի, Մեծկերտ, Բոլումորի և տեղացի քրդերի միջոցով նախապես հանձնարարում ու ապա գնում այն բոլոր արջերը և դրանց քոթոթները, որ վերը նկարագրած ձևերով որսացված կամ աճեցված էին։ Այստեղի արջերի շնորհալի պարերին և զանազան խաղերին կարելի էր ականատես լինել Թուրքիայի բոլոր քաղաքներում, ավաններում և շեներում, որոնց վարժեցման իրավունքը վերապահված էր ամեն ազգի գնչուներին։

Իսկ այդ բոլորի մեջ ամենապատվավոր տեղը գրավում էր արջաշունը իր պատկառելի կերպարով և կիսավայրենի հանդգնությամբ։

Գայլի մորթին անհետաքրքիր, իսկ միսը անպետք էր։ Նրան որսում էին և պահում բացառաբար շնաբուծության համար։ Գայլն էլ հաճախ կերակրում, այսինքն՝ իր կաթով սնուցանում էր շան լակոտին և մեծացնում իր ձագերի հետ, բայց ամենակարևորը շան և գայլի ամուսնությունից ծնված ձագերն էին։ Ինչպես արջին, նույնպես և գայլին պահում էին բնական այնպիսի լավ պայմաններում, ինչ որ նա ապրել էր ազատության ժամանակ՝ խորը և դարձդարձիկ այրեր, քարանձավներ ունեցող ժայռեր, որսալու և բզկտելու հարմարություններ։ Գայլն իր բնական անձավում որսում էր վայրի նապաստակ, որն աննկատելի կերպով գայլաբույնն էին ուղարկում որսորդները գետնուղիներով, տեսնում և հալածում էր աղվեսներ, կաքավներ, նույնիսկ առնետներ։ Բայց ասում էին, թե արջը ավելի մարդամոտ է, քան գայլը, որի ընտելացումն ավելի դժվար և սակայն դայլը կազմում էր շնաբուծության գլխավոր առանցքը։

Շնագայլը կամ գայլաշունը վայրի գազանների ոխերիմ թշնամին էր։ Գայլաշուն անվանվում էր այն շան լակոտը, որի հայրը արու դայլն էր, իսկ մայրը՝ ծնողն ու սնուցողը, մայր շունը, ի մասնավորի այն էգ լակոտը, որ մայր գայլի կաթից էր սնվել։ Շնագայլը ոչխարների հոտերի պաշտպանության հատուկ շան ցեղ էր, որի հայրը սնվել էր մայր գայլի կաթով և փեսայացել էգ գայլին. շան և գայլի բեղմնավորումից ծնած լակոտները անվախ, հանդուգն, բզկտող, բայց իրենց տիրոջը շատ հավատարիմ շներ էին, մանավանդ նույն ցեղի պատկանող էգ շունը՝ Թելն և Ռեյի անունով ճանաչված։

Այս կարգի շները գնահատվում էին շատ սուղ, որոնց վրա գենք բարձրացնելը կամ սպանելը համահավասար էր մարդասպանության։ Դերսիմցին, ավելի ճիշտ՝ լեռնային հովիվն իր շանը սիրում էր իր հարազատների նման և շատ անգամ ինքնինքը վտանգում շան կյանքը փրկելու և ինքը քաղցած մնում շանը կերակրելու համար։ Գայլխեղդ[1] այս շները հովիվների ամենավստահելի և հավատարիմ ընկերներն էին։

---

[1] Գայլխեղդ՝ նշանակում է գայլ խեղդող շուն, որը առհասարակ զրահապատվում էր։ Շան կրծքի և կռնակի այն մասին, որ դեպի վիզն է երկարած, ճիշտ առաջի ոտքերի ուղղությամբ, ամրացվում էին պողպատից սուր խրոցներ, կրծքին՝ հորիզոնական, թիկունքին՝ ուղղահայաց, տասից-տասներկու սմ երկարությամբ, ճկույթ մատի հաստությամբ։ Շունը գազանների վրա հարձակվելիս նախ խփում էր կրծքով, և առաջին զարկով կարողանում սպանել հակառակորդին.

Լուսանը, որ պատկանում է կաղավաղդիների ցեղին, թեև փոքր, բայց վաստակավոր գիշատիչ է։ Մեծ դժվարությամբ էին ձեռք բերվում որա նոթածին ձագուկները, որոնք շատ սիրուն էին, բայց վայրենի, թույլ չէին տալիս գգվել կամ շոյել։ Լուսանի կենակցությունը կատվի հետ տալիս էր կիսավայրենի մի կատու։ Քրդերը չէին ասպանում կաղավաղդիներին, ի մասնավորի վայրի կամ բնատանի կատուներին։ Ավանդություններ ասում էր, որ դրանք բանտարկության ժամանակ առնետներից պաշտպանել են Հայրենի էմներին։ Կային աշխարհներ, որ այդ ավանդական սնահավատությունը վերագրում էին իսմամ Հյուսեինի պաշտպանությանը։ Եվ սակայն այդ բոլորը չէր արգելում կաղավաղդիների խնամիությամբ բազմացնելու կատուների վայրագ ցեղը, որոնք մաքառում էին օձերի, կարիների և ամեն տեսակ առնետների դեմ, նույնիսկ պատկանում հովանոցները գող ագվեսների կամ շուտիկ կղաքիների հարձակումներից, որոշ պարագաներում էլ որսի շան դեր էին կատարում։

Դատոնների մեջ ամենավայրագը ճովազն էր, որը, սակայն, վախենում էր մանավանդ մայր արջից։ Արջն ու հովազը խուսափում էին իրարից, նրանք չէին հայածում մեկմեկու, բայց հարկադրաբար իրար հանդիպելիս մահու և կենաց պայքար էին մղում և ոչնչացնում միմյանց։

Ամենադժվար որսացվող կենդանին հովազն էր, որին հանախ սպանում էին թանկագին մորթի համար և սակայն պատահել են դեպքեր, որ մեծ դժվարությամբ կարողացել են նաև հովազի կորյուններ գողանալ, բայց ասում էին, թե առհասարակ գտնվում է մայրը, նախքան ձագերի հափշտակումը։

Եղնիկների և այծյամների սարսափը եղող այս գազանը վախենում էր շնագայլերից և խուսափում նրանց տեսադաշտից։

Որսացված հովազների կորյունները մեծացնում էին, բայց դժվարությամբ էին բազմացնում։ Լուսանի հետ նրա գուգավորումից աշխարհ էին գալիս միջին հասակի հովազներ։

Ագվեսը, նապաստակը, սկյուռը, փորսուղը, վայրի կատուն անհատրրիր որսեր էին, մորթին էր պիտանի վաճառելու համար, իսկ առանձնապես նապաստակին գնդակ չէին արձակում, պատ-

---

[1] Գատոմում էին, թե սկյուռները սիրահար են երաժշտության, սիրում են ի մասնավորի ռագի և որեգի միջոցով լցանակված մեղեդիները, սիրո երգերը և պարում են խենթավարված։ Բոռնն Բարբլն Գագի Հեյտոն մեկ ցույց ավեց իր գայի՝ Տուրսոյի վարժեցրած կենդանիների պարը։ Գարին մասնակցում էին՝ Եայո-Հասոն՝ Քեռի արջը, Մուսայիպ Որնատոն՝ Ագվեսը, Վերվե գրեի Շարեն՝ փորը հարս նապաստակը և Տրգոն Մյրգան Զրմոն՝ սկյուռը։ Արեգածուն հետևում էր գազանների սիրած եղանակը՝ յե-լո-լոն, սաղը ձայնակցում էր, գազանագուսպ Տուրսոն ձայն էր տալիս՝ Հեսե պրոի, հեսե Հեյրան Հասո, պե մեյոան, հեսե պրոի պե մեյոան (Անտառի արջ, եկ հրապարակ)։ Իր Բարսացից գուրս էր գալիս արջի ոչ շատ մեծ բոթոթը և չորորալով պար գալիս, հետևելով պարեգանակին։ Նույն կարգով պարի էր հրավիրում և մյուսներին, որոնց մեջ առաջնությունը իրենց հետևյալի շարժումներով շահում էին սկյուռն ու ագվեսը։

տարբ հետանում էր, այլապես սկսվում էր գոյամարտը։ Այդ գեպքում յուրաքանչյուր գազան իր մանիքներից ոգտագործում էր նաև կրծքին և թիկունքին ամրացված հատու խրոցները, որոնք ամեն մեկ գարկից յայն վերը էին բացում գազանի մարմնի վրա, հատկապես սրտին։

Հատարանելով, թե ինքնապաշտպանությունից գուրկ այդ վախկոտ կենդանին, որ գոզում է ամեն մի շարժումից, արժանի է գթության։ Քրդերը նապաստակի միտը չէին ուտում, ասում էին, թե մուճուտատ է, որսում էին ողջ-ողջ, բազմացնում և վայրի նապաստակներով կերակրում իրենց սնուցած գազաններին։

Նշվածներից ամենաուշագրավը սկյուռն էր, որն ավելի շուտ էր ընտելանում, քան ագվեսը։ Սկյուռ շատ կար այս շրջանում, որին որսում էին ողջ վիճակում, բազմացնում, կթում և վաճառում ըստ պահանջի։

Սկյուռի և ագվեսի զուգավորման փորձերը ապարդյուն էին անցնում։

ԿՀղակավոր վայրի կենդանիներից ամենահետաքրքիրը քարայծն (այծյամ) էր՝ ոչ թե մորթի և մսի համար, այլ ընտանի այծերի ցեղը ավելացնելու, ցրտից չվախենալու, ժայռից թռիչք կատարելու, վայրի գազաններից հեշտությամբ խուսափելու համար։ Նախապատվություն էին տալիս վայրի բարայծի արուի (նոխազ) սերնդագործությանը։ Վայրի նոխազը ողջ որսալը շատ դժվար էր, հազվադեպ պարագաներում թեև հաջողել էին ձեռք գցել այն՝ ձմռան գիշերային շուրջկալներով և կամ բարձր ապառաժներից ձյան հաստ շերտերի մեջ նետվելու հարկադրանքով։ Բայց գտնում էին, որ ձեռք բերված արդյունքը չի արդարացրնում թափված ջանքերը, քանի որ խլում էր նույնիսկ մարդկային գոհեր։ Խուսափելու համար այդ դժվարություններից, մտածել էին տարբեր միջոցներով ձեռք գցել իրենց այծերի նախահայրերը նկատվող ներկա վայրի այծյամներին՝ ուղղակի սերնդագործությամբ, ուլեր մեծացնելով, տնային սերնդագործման իրականացմամբ։ Առաջին ձևի իրականացման փորձերը թեև սուղի էին նստում,

---

[1] Գատոմում էին, թե սկյուռները սիրահար են երաժշտության, սիրում են ի մասնավորի ռագի և որեգի միջոցով լցանակված մեղեդիները, սիրո երգերը և պարում են խենթավարված։ Բոռնն Բարբլն Գագի Հեյտոն մեկ ցույց ավեց իր գայի՝ Տուրսոյի վարժեցրած կենդանիների պարը։ Գարին մասնակցում էին՝ Եայո-Հասոն՝ Քեռի արջը, Մուսայիպ Որնատոն՝ Ագվեսը, Վերվե գրեի Շարեն՝ փորը հարս նապաստակը և Տրգոն Մյրգան Զրմոն՝ սկյուռը։ Արեգածուն հետևում էր գազանների սիրած եղանակը՝ յե-լո-լոն, սաղը ձայնակցում էր, գազանագուսպ Տուրսոն ձայն էր տալիս՝ Հեսե պրոի, հեսե Հեյրան Հասո, պե մեյոան, հեսե պրոի պե մեյոան (Անտառի արջ, եկ հրապարակ)։ Իր Բարսացից գուրս էր գալիս արջի ոչ շատ մեծ բոթոթը և չորորալով պար գալիս, հետևելով պարեգանակին։ Նույն կարգով պարի էր հրավիրում և մյուսներին, որոնց մեջ առաջնությունը իրենց հետևյալի շարժումներով շահում էին սկյուռն ու ագվեսը։

բայց ավելի դրական արդյունք էին տալիս։ Լավ հնտազոտելուց հետո որսորդ հովիվները օրեր շարունակ փակվում էին քարայրերում, ուր քարայծերի հոտն էր գիշերում, և ծայրահեղ զգուշության շնորհիվ կարողանում էին տեղվույն վրա ուսումնասիրել զուգավորման շրջանի հետ կապված բոլոր մանրամասնությունները՝ արուի մզկըտոցը, հոտոտելու և ստուգելու ձևը, նախապատվության առարկա էգի մարմնական կազմությունը, էգի ինքնակամ ձգտումը դեպի արուն և կամ ընդհակառակը նրա խուսափումը արուի գգվանքներից և այլն։ Ծանոթանալով քարայծերի բնավորության և սովորությունների բոլոր մանրամասնությանը, բեղմնավորման շրջանը մոտենալիս, ընտրովի ընտանի մայր այծերից հարմարագույններին տասնյակներով ուղարկում էին որպես հարսնացու վայրի փեսաներին և բաց թողնում այն ծերպերի և ապառաժների արանքին, ուրկից որ մակաղատեղ էին գնալու այծերը։ Ասում էին, թե քարայծերը նախ խրտնում էին իրենց ցեղակիցների ներկայությունից և փախս տալիս, ապա դեպի էգը մղող բնազդական զարթոնքը կաշկանդում էր արուին, մյուս կողմից արուին մոտենալու էգի ձգտումը առաջ էր մղում ընտանի մայր այծերին հետևելու վայրիներին։ Մի քանի անգամ խուսափումներից հետո, վտանգի բացակայությունից քաջալերված, արուն փորձում էր մոտենալ և հոտվտալ։ Նկատի ունենալով, որ ընտանիների զուգավորման շրջանն ավելի կանուխ էր սկսվում, քան վայրիներինը, որովհետև ընտանին վայելում էր մարդու հոգածությունը և պատսպարվում տաք գոմերի մեջ, իսկ վայրին, ենթակա բնության խստություններին, ավելի ուշ էր սաղմնավորվում՝ ավելի ուշ ծնելու համար։ Որսորդները հեռվից հսկում էին և առանց նկատվելու նրանց պաշտպանում վայրի գազանների հարձակումից։ Երբ հասնում էր ընտանիները տուն բերելու, բաժանման օրը, սրինգը կատարում էր իր դերը, դեպի տուն, դեպի գոմ հրավիրելով այծերին, ու երբ քարայծերը խրտնած սրնգի գեղգեղանքից և շների հաչոցից փախուստ էին տալիս դեպի անմատչելի ժայռերը, սրնգից հմայված ընտանի այծերը կանգ էին առնում, իսկ շները նրանց քշում էին դեպի տուն։

Երկրորդ ձևն ավելի հեշտ ու գործնական էր, որսացված ուլիկները խնամում, մեծացնում, արուն նոխազ, էգը որպես այծ էին օգտագործում և ժամանակի ընթացքին ընտելացնում։

Նույնը կատարվում էր նաև մարիների և խոյերի նկատմամբ գրեթե նույն ձևերով և նույն պայմաններում։ Դերսիմցի հայերը և քրդերը գնդակ չէին արձակում եղջերուի (արուի) և եղնիկի (էգ) վրա, որոնք սուրբ և անձեռնմխելի էին նկատվում բոլորի կողմից այն հաստատ համոզումով, որ անտեր չեն։ Վայրիս կնիկան՝ եղնիկների աներևույթ տերը, հսկում է նրանց և պատժում սպանողներին ու վնաս հասցնողներին, անգամ վայրի գազաններին։ Սնահավատությունը առիթ էր տվել ստեղծելու ավանդական պատմություններ և հայտնաբերելու կերպարներ՝ սպիտակամորուս հովիվ, թևավոր ագռայիլ և զանազան այլ կերպարներով պատկերացված սրբեր, աներևույթ ուժեր, որոնք արածեցնում, հսկում և պաշտպանում էին սարերի բնատուր այս գեղեցկությունը։

Ոմանք իբր թե անձամբ տեսել էին Վայրիս կնիկանին և ուշաթափվել։ Դրանց մեջ կային և արկածյալներ՝ տիրոջից «խփված», բայց ողջ մնացած կես-անդամալույծներ, որոնք պատմում էին պատմում էին եղնիկների կյանքի հետ կապված այնպիսի դեպքեր և տալիս այնպիսի մանրամասնություններ, որ իրատես և բնագետ մարդն անգամ մի պահ ընկնում էր տարակուսանքի մեջ և չհավատալով հանդերձ, ակամա ենթարկվում պատմողի ներշնչած ազդեցությանը։

Այդ արկածյալներից մեկը պատմում էր, թե ինքը չանսալով մեծերի խորհրդին, նրանցից գաղտնի գնացել է որսի, որոշած լինելով ամեն գնով սպանել մի եղջերու և ապացուցել ծերերին նրանց սխալ համոզումները եղնիկների պաշտամունքի մասին։ Անցնելով Կարմիր-բարերի (Քեմերե-սուրի) բարձունքից, հասել է տնտառ։ Ծանոթ արահետում հայտնվել է հոյակապ արուն, ապա տասից ավելի եղնիկ։ Վեր է առել շեշխանեն, որ կրակի ու հանկարծ թեքեն կերպարանափոխվել է սպիտակավուն մորուսով մի հովվի, որը կանգնած նույն վայրում անհոգ ու անխռով շուրջն է գիտել։ Որսորդի արյան շրջանառությունը կանգ է առել, հրացանը ձեռքից ընկել ու թե հետո ինչ է եղել, ինքը չի հիշում։ Այնուհետև այրերը բացել է տանը, շուրջը մարդիկ են հավաքված, իսկ մայրը արտասվելիս է եղել։ Ավելի ուշ պատմել են, որ նույն օրը կեսօրին հովիվները գտել են իրեն դրեթե անկենդան վիճակում և փոխադրել տուն։ Մատաղ են անում, վիրը աղոթում է, տեսեն կուլպենկ է անում ու սա առողջանում է, բայց աջ ձեռքի երեք մատները՝ բթամատը, ցուցամատը և միջնամատը փայտանում են։

Մի ուրիշը պատմում էր, թե ինքը լավ հիշում է, որ չի կարողացել կրակել սուրբ թեքեի վրա, բայց հովիվները գտել են շեշխանեն դատարկված

և գետ չպրծված, որից հեռացրել են, թե վայրը (ավերը) խնայել է երիտասարդի կյանքը և հրացանն արձակել պարապության մեջ, իմաց տալու հովիվներին, որ գան ու տուն փոխադրեն պատժված անհավատին։

Հայրս ու հորեղբայրս վերադառնալով ս. Գր. Լուսավորչի ուխտագնացությունից, ջերմեռանդությամբ պատմում էին Սեպուհ լեռան ապառաժներում արածող եղնիկների աներևույթ տիրոջ մասին, ասելով, թե նա հայտնվել է ուխտավորներից Մոսոյին և Գուրոյին, որոնք անխոհեմություն են ունեցել բարձրանալու Սեպուհի քարայրները՝ վայրի այծեր որսալու համար, և հիշտ այն պահին, երբ շրջապատել են եղնիկների ձագուկներին ու փորձել բռնել անմեղ կենդանիներին, քարայրի խորքից լսել են այնպիսի գոռոց, որ սարսափից հազիվ կարողացել են դուրս փախչել քարայրից. իբր թե գոռացողը մի սպիտակամորուս հովիվ է եղել։

Ես անմեղորեն ուզեցի գիտել տալ, թե մի գուցե ոչ թե սպիտակամորուս սուրբն է եղել, այլ ուխտավորների հետամուտ եղող սովորական արջը։ Կասկածիս համար ինձ մերկացրին և կապեցին պարտեզի թթի ծառին ու մոշի մոլ փայտով կապտեցնելու սաստիկ զանակոծեցին։

Վայրի կենդանիներից հայտնի էր նաև վարազը։ Դերսիմցին խորշում էր վարազից, միսը՝ մուրտառ, ձայնը՝ անախորժ։ Եթե պատահում էր, որ սպանեին, ձեռք չէին տալիս, ձգում և հեռանում էին, որ գազաններին կեր հայթայթած լինեն։ Հայերը ասում էին, թե Տրդատ թագավորը քրիստոնեությունից առաջ ս. Գր. Լուսավորչին չարչարելու հետևանքով խոզ է դարձել և սարերում թափառել։ Մահից հետո, հավանաբար, իր հոգին կրկին մտել է վարազի մեջ և շրջում է սարերը մինչև վերջին դատաստանի օրը։ Խղճալով վարազին, չէին ուզում սպանել իրենց թագավորին, ուտելով խոզի միսը, կերած կլինեին թագավորի միսը։ Իսկ շատերը համարում էին, թե Աստված ստեղծել է վարազին սնունդ հայթայթելու համար վայրի գազաններին։ Գայլը, արջը, հովազը թեև վախենում են նրանից, բայց խոճկորների մսի համը գերադասում էին բոլոր որսերից, նույնիսկ աղվեսը, վայրի կատուն և լուսանը հետամուտ էին գողանալու խոճկորներին։

Քրդերի մեջ առանձին տեղ էին գրավում աղվեսներին վերագրված առասպելները, որոնք ներկայացնում էին զանազան ձևերով։ Կային, որ վախենում էին կրակել աղվեսի վրա, ուրիշները խորհուրդ էին տալիս ձեռք քաշել աղվեսի որսից։ Եվ սակայն տեղից-տեղ, գյուղից-գյուղ տարբերվում էին աղվեսի նկատմամբ սնուցված սնահավատության վերաբերող պատմությունները. նույնիսկ պատկերացումների ձևն ու մտահղացումը։ Մի տեղ եթե աղվեսը հրապարակ էր գալիս դևի կերպարով, մի ուրիշ տեղ դառնում էր նոր հարս կամ դեռ չամուսնացած ջահել աղջիկ, այլ տեղ՝ փեսա և այլն։

«Չնչխանես շտկեցի, աղվեսին վրա նշան առի որ կրակեմ, նէյիմ աղվես չի, նոր հարսա, յաշմախը փարտում, թևերը տորտրցնում, ջլօշարիէ խաղում։ Սրտոտ, աչքի ընկած որսորդ էի, էս ինչ հրաշքա՝ ըսի, ու չնչխանես վար առի, չնչխանես վար առի, նէյիմ աղվեսա, նորից վեր առի՝ յաշմախլի հարսա, ինչքան վախրթ անցեր չիյտիմ, մեկէր նայիմ ախրարս Ուսոն, Խրտոից Մահմուտը, Պէյրուից Ալօն դրկեցին ինձ, որ վար չինամ, մեկէր աղրոյս տույէ եղեր թի ախրարը չար սահաթի տասթէ էկեր ու ընկերներով հավալներով օգնության հասեր, իրենց աչվըներով տեսեր հասկցեր և գրկեր են իս ըն սահաթին, որ պայըլմիշ պրտի ըլլամ եղեր»։

Ու այսպես, Ախոյին իբրև թե ուշակորույս վիճակի մեջ տուն են տանում, մատաղ մորթում, վախը կապում, փենկգեհեր են խմեցնում ու մի կերպ կյանքը փրկում։

Ս. Հովհաննու փոքր մատուռի ստորոտի մեծ ժայռերի սրտում մի ծակ կար, Աղվեսարուն անունով, ուր ապրում էին աղվեսի ընտանիքներ, պարզ այն պատճառով, որ ամառ թե ձմեռ այդ արտուտների տակ մատաղ էին մորթում, հոգեհաց տալիս և առատ ոսկորներ ձգում որպես «աղվեսակեր» կամ «աղվեսաբաժին»։ Մյուս կողմից ձմռանը կաքավներ էին պատսպարվում արտուտների փչակներում, իսկ ամենակարևորը, որ ոչ որ չէր համարձակվում հրացան կրակել գերեզմանատան մեռելների և ս. Հովհաննու մատուռի մոտ։ Ահա սրանք էին սուրբ աղվեսները։ Աղվեսներից մեկը առանձնապես ուշագրավ էր, դա մորթի վրա սևին տվող բծեր ուներ և իր մեծությամբ զանազանվում էր մյուսներից։

Թռչուններից տատրակը և աղավնին սուրբ էին համարվում, ոչ որ չէր համարձակվում կրակ բանալ ժայռերի ծերպերում բույն դրած և խոռոչներում ման եկող վայրի աղավնիների անհամար խմբերի վրա։

Չէին սպանում ծիծեռնակին, արագիլին, արծվին, կռունկին և նույնիսկ լրաբեր կաչաղակին, վատ աչքով էին նայում զարմանի համար ծառեր որսացող որսորդներին։

Որպես թռչնորսություն, սիրում էին փասյանի, կաքավի և վայրի հավի որսորդությունը, իսկ որպես առևտրի միջոց՝ բազեարուծությունը։ Բազեի փոքր ձագերը պահում էին մեծ խնամքով, վարժեցնում որսի և վաճառում գնորդներին։

Պահում և որսի էին վարժեցնում նաև կաքավներին։ Կաքավների սպանությունը, բացի որսի պատճառած հաճույքից, համարվում էր որպես փոխ վրեժ։ Ավանդաբար պատմում էին, թե կաքավը ս. Թորոսին (Թեվադորոս) մատնել է կռապաշտ Սուրեն իշխանին[1], որը սպանել է նրան ս. Թորոսի վանքի ժայռերի ստորոտում և կաքավները իրենց կտուցները ու ոտքերը թաթախել են նահատակված սրբի արյան մեջ և կարմրացրել։

Կաքավների մի ուրիշ ցեղը, որ «չիլ» կամ «ճիռ» կաքավ էին կոչում, ենթակա չէր կրոնական նույն հալածանքին, որովհետև ըստ նույն ավանդության, ճիռերը դատապարտել են խասերի մատնության վատ արարքը և ոտքերն ու կտուցները չեն թաթախել սրբի արյան մեջ։ Ճիռերի կտուցները և ոտքերը մնացել են գորշ, իսկ կաքավներինը՝ կարմիր։

ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Դերսիմի արագավազ ջրերում ամենատարածված ձուկը ալապալղն (իշխանաձուկ) էր, որն ուներ 15—20 սմ երկարություն, 200—400 գր քաշ։

Լեռնային բոլոր ջրերում առատ ալապալղ կար, բայց կազմակերպված ձկնորսություն գոյություն չուներ։ Քրդերը ալապալղը օգտագործում էին ճմլվածքներ դարմանելու, իսկ հայերը՝ խորովելու համար։

Ալապալղը որսալու համար բարդ սարքեր չկային, առավելապես որսում էին ձեռքերով և կամ գավազանի ծայրին կապված սակառներով։ Այդ ձուկը թաքնվում էր քարախորշերում, ծոցավոր ապառաժների արանքում և լողում ջրվեժից ջրվեժ։ Սև ու կարմիր բծերով (խալավոր) այս ձուկը ժողովրդական բժշկության մեջ մեծ դեր էր խաղում՝ կոտրված բայց ըրճըխչու կողմից սխալ տեղադրված ու ամրացած ոսկորը մեկը մյուսից անջատելու համար։ Նոր որսած ձուկը թարմ վիճակում լավ ծեծում և կապում էին կոտրված ոսկրին, օրը երկու անգամ, երեք օր շարունակ նույնը անելուց հետո, պնդացած ոսկրը անջատվում էր, անվնաս ուղղում և տեղադրում էին։ Նույն ձևով վարվում էին ճմլվածքների, ջղային հանգույցների (տամար-տամարի վրա ելած) դարմանումների ժամանակ։

Եփրատն ու Արածանին ձկնառատ գետեր էին, ամենափոքրերից մինչև 25 կգ քաշ ունեցող տեսակներ շատ կային, բայց ոչ ոք չգիտեր դրանց բոլորի անունները։ Տեղի բնակիչներին ծանոթ էին ձկների հետևյալ տեսակները՝ ալապալղ (արքայաձուկ, որի մասին խոսվեց վերը), լուսնթագ, կողակ, խատուտիկ, սանտերը, թոս-թոս (կամ ֆրս-ֆրս), գըրոդ (որ նշանակում է մեծ, գեր), կուզիկ, գիրուկ, լեզկի, մոզ, շրպութ (թռչող ձուկ), օձաձուկ, շնաձուկ (կամ ջրշուն), որոնցից ամենահարգիներն էին՝ առաջին տեղը գրավող ալապալղը, ապա փշագուրկ, յուղալի և համեղ թոսթոս (կամ ֆըս-ֆըս) ձուկը, որը բարեձև մարմին ուներ, կռնակը սև, փորը մոխրագույն, կշիռը մինչև 1,5 կգ, սա սիրում էր բույն դնել հողաշերտերում և հեռու էր մնում տարբեր ձկների վտառներից, մենակյաց էր, ուներ թրանման թևեր, որոնցով կարող էր վնասել մարդոց, եթե ձեռքով բռնեին, տարօրինակ ձայն էր հանում, որից և ստացել էր իր անվանումը։ Թոս-թոսը որսում էին առավելապես գարնան ամիսներին, երբ գետերը հորդում և իրենց հունից դուրս էին գալիս։ Սա մտնում էր ջրից բացված հողաշերտերը, ուր ձկնորսները գտնում և բռնում որսում էին ձեռքերով։ Մյուսը մոզն էր, որը հաստագլուխ, հաստաշրթունք, նվազ փշոտ և համեղ միս ունեցող ձուկ էր, մարմինը սլացիկ, արագաշարժ, տեղ-տեղ քաշը հասնում էր մինչև 25 կգ, այդ քաշն ունեցող մոզը կոչվում էր ըռատամ: Զանազան մեծություն և կշիռ ունեցող մոզեր կային, որոնց միջին քաշը մի կգ-ից տասի միջև տատանվում էր։ Բացի ըռտամության հասնող մոզից մնացյալները առավելապես որսացվում էին գետերին խառնվող ջրերի գետաբերաններում և ակերում, որովհետև մոզը սիրում էր ձու դնել անուշ և զուլալ ջրերի մեջ։ Երբ գետերի ջրերը հորդում ու պղտորվում էին, և մոզերը վտառներով լողում էին դեպի զուլալ ջրերը, ձկնորսը հետևում էր նրանց շարժումներին և պատնեշներ կանգնեցնելով գետակը գետին խառնվելու տեղից քիչ վեր, փոխում էր հոսող ջրի ընթացքը։ Ջրի նվազումից սարսափահար ձկները փախուստի էին մատնվում դեպի գեար և դեմ տոնում պատնեշին, ուր և կուտակվում էին մեծով ու

[1] Կռապաշտ Սուրեն իշխանը, որ բնակվելիս է եղել Սուրենավանում (ներկայիս Զուրեն քրդաբնակ գյուղը), սպանել է սուրբ Թեադորոսին։ Այս ավանդությունը պատմում էին Դերջանում, Դերսիմում և Պալապանի բոլոր գյուղերում, ուր գտնվում է հիշյալ վանքը՝ Երզնկայի և Դերջանի միջև Մնըրլերդի (Մըլրերդ) ստորոտում։